



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/101/2025

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

26 մարտի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարությանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի մարտի 26-ին քննելով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ՝ Արմեն Սամվելի Հովհաննիսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/101/2025 գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 Հանձնաժողովը ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով, նույն օրենքի 26.1-րդ և 26.2-րդ հոդվածներով սահմանված կարգով Արմեն Հովհաննիսյանի վերաբերյալ իրականացված բարեվարքության

ուսումնասիրության շրջանակում, ուսումնասիրել է վերջինիս գույքային դրությունը, ինչպես նաև նախկինում ներկայացված հայտարարագրերը, որի ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն իրականացնելով հայտարարագրերի վերլուծություն և ստուգում, որի արդյունքում արձանագրել է հետևյալը՝

1.2 Պաշտոնատար անձի՝ 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրի (ասյուիետ՝ Հայտարարագիր) «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում Արմեն Հովհաննիսյանի կողմից որպես բնակության և հաշվառման հասցե նշվել է ՀՀ Արմավիրի մարզ, [REDACTED], մինչդեռ Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում վերոնշված հասցեում գտնվող անշարժ գույքը չի հայտարարագրվել որպես փաստացի տիրապետվող անշարժ գույք:

1.3 Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդները» բաժնում տվյալ տարվա սկզբում առկա դրամական միջոցի գումարը հայտարարագրվել է՝ 552,814 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը՝ 2,612,242 ՀՀ դրամ, մինչդեռ նշված չափով բանկայի հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ Կենտրոնական բանկից չեն ստացվել:

1.5 Հանձնաժողովը վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերևույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի մարտի 18-ին Արմեն Հովհաննիսյանին հասցեագրել է թիվ 01/1137-2025 գրությունը՝ հրավիրելով նշված գրությունը ստանալուց հետո՝ 3-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 14:00-ին Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն, իսկ 5-րդ աշխատանքային օրը՝ ժամը՝ 11:00-ին

գործի քննությանը մասնակցելուն, որի վերաբերյալ Արմեն Հովհաննիսյանը պատշաճ ծանուցվել է:

1.4 2025 թվականի մարտի 24-ին պատշաճ ծանուցված Արմեն Հովհաննիսյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ 38/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.5 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Արմեն Հովհաննիսյանի բացակայությամբ 2025 թվականի մարտի 26-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Վարույթի մասնակից Արմեն Հովհաննիսյանն արձանագրության կազմման ընթացքում ներկայացրել է պարզաբանում, որի համաձայն՝ ՀՀ Արմավիրի մարզ, [REDACTED] [REDACTED] հասցեն հանդիսանում է իր հաշվառման և մշտական բնակության հասցեն, որի վերաբերյալ տվյալներն իր կողմից մշտապես հայտարարագրվել են: Սակայն նշված գույքը՝ որպես փաստացի տիրապետվող գույք իր կողմից չի հայտարարագրվել Հայտարարագրում այդ տվյալը չնկատելու պատճառով: Կարծել է, որ նշված բնակարանի վերաբերյալ տվյալը բացահայտել է, ներկայացնելով որպես հաշվառման և փաստացի բնակության վայր: Արմեն Հովհաննիսյանը նաև նշել է, որ նշված բնակարանը հանդիսանում է մոր՝ Շուշանիկ Հովհաննիսյանի և քրոջ՝ Սյուզաննա Հովհաննիսյանի ընդհանուր բաժնային սեփականությունը:

Բանկային հաշվին տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը՝ 2,612,242 ՀՀ դրամը հայտարարագրելու վերաբերյալ Արմեն Հովհաննիսյանը հայտնել է, որ նշված գումարը հանդիսացել է «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության կողմից իրեն տրամադրած օվերդրաֆտի մնացորդ, որը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել որպես վերջնական հասանելի մնացորդ, որի վերաբերյալ Հանձնաժողով է ներկայացրել առցանց հավելվածից արտահանված իր բանկային քարտի քաղվածքը 2023 թվականի

դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ «վերջնական հասանելի մնացորդ՝ 2,612,242 ՀՀ դրամ» տվյալով, ինչպես նաև «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության [REDACTED] հայտապայմանագրի պատճենը:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/101/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 Քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ՝ Արմեն Սամվելի Հովհաննիսյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.2 Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում Արմեն Հովհաննիսյանն որպես իր բնակության և հաշվառման հասցե նշել է ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Մեսրոպ Մաշտոց փողոց, 59 շ. 48 բնակարանը:

3.3 Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում Արմեն Հովհաննիսյանն որևէ տվյալ չի հայտարարագրել, մինչդեռ նաև 2023 թվականի ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետել է ՀՀ Արմավիրի մարզ, [REDACTED] բնակարանը:

3.3 Հայտարարագրի «Ա.3. Հայտարարատու պաշտոնատար անձի հետ մերձավոր ազգակցությամբ կամ խնամիությամբ կապված համատեղ չբնակվող անձանց մասին տվյալները» բաժնում որպես մայր ներկայացրել է Շուշանիկ Մայիսի Հովհաննիսյանին, իսկ որպես քույր՝ Սյուզաննա Սամվելի Հովհաննիսյանին:

3.4 ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք Մեսրոպ Մաշտոց փողոց, 59 շ. 48 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքը թիվ [REDACTED] անշարժ գույքի սեփականության

իրավունքի գրանցման վկայականի համաձայն հանդիսանում է Շուշանիկ Հովհաննիսյանի և Սյուզաննա Հովհաննիսյանի ընդհանուր բաժնային սեփականությունը:

3.5 Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդները» բաժնում տվյալ տարվա սկզբում առկա դրամական միջոցի գումարը հայտարարագրվել է՝ 552,814 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը՝ 2,612,242 ՀՀ դրամ, մինչդեռ նշված չափով բանկայի հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ Կենտրոնական բանկից չեն ստացվել:

3.6 Հայտարարագրի «Գ.1.2.Ստացված վարկերի և փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ» բաժնում հայտարարագրվել է որպես վարկի մայր գումարի մնացորդի չափը՝ 2,387,758 ՀՀ դրամ և որպես վարկի նպատակային նշանակություն՝ օվերդրաֆտ:

3.7 «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության առցանց հավելվածից արտահանված Արմեն Հովհաննիսյանի բանկային քարտի քաղվածքների տվյալների համաձայն 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ որպես վերջնական հասանելի մնացորդ՝ 552,814 ՀՀ դրամ, իսկ դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ վերջնական հասանելի մնացորդ 2,612,242 ՀՀ դրամը հանդիսացել են «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության թիվ [REDACTED] [REDACTED]» հայտապայմանագրի համաձայն Արմեն Հովհաննիսյանին տրամադրված օվերդրաֆտի վերջնական հասանելի մնացորդները: Սակայն Արմեն Հովհաննիսյանի «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերությունում առկա թիվ [REDACTED] հաշվեհամարի մնացորդը 2023 թվականի հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ վերոնշված բանկայի քարտի քաղվածքների համաձայն կազմում են համապատասխանաբար 0,04 ՀՀ դրամ և 0,09 ՀՀ դրամ, որն էլ հաստատվել է Կենտրոնական բանկի կողմից ստացված տվյալներով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի (Գույքի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի 7-րդ կետի համաձայն Հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ դրամական միջոցները (այդ թվում՝ բանկային հաշիվներում առկա): Նույն հոդվածի 1.1-ին մասի Հայտարարագրում ներառվում է նաև հայտարարատուի կողմից փաստացի տիրապետվող գույքը, ինչպես նաև այն գույքը, որը սեփականության իրավունքով պատկանում է երրորդ անձի, բայց ձեռք է բերվել հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին, կամ այդ գույքից փաստացի օգուտ է ստանում կամ այդ գույքը տնօրինում է հայտարարատուն:

4.3 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ** ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.2 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները** սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.3 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական

հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.4 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.5 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ

տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, **Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք:**

Սույն գործով Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ՝ Արմեն Սամվելի Հովհաննիսյանը Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի ապրիլի 3-ին Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է սխալ և ոչ ամբողջական տվյալներ, այն է՝

1. Հայտարարագիր «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում որպես իր բնակության և հաշվառման հասցե նշվել է ՀՀ Արմավիրի մարզ, [REDACTED] [REDACTED] բնակարանը, մինչդեռ Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում վերոնշված հասցեում գտնվող անշարժ գույքը չի հայտարարագրվել որպես փաստացի տիրապետվող անշարժ գույք:

2. Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդները» բաժնում տվյալ տարվա սկզբում առկա դրամական միջոցի գումարը հայտարարագրվել է՝ 552,814 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը՝ 2,612,242 ՀՀ դրամ, մինչդեռ նշված չափով բանկային հաշվի մնացորդների վերաբերյալ տվյալներ Կենտրոնական բանկից չեն ստացվել:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու

համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել հայտարարատու անձանց հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, հայտարարատու անձանց գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Արմեն Հովհաննիսյանը Հայտարարագրի «Բ.1.4 Հայտարարատուի կողմից տվյալ տարվա ընթացքում 90 օրից ավելի փաստացի տիրապետվող անշարժ գույք կամ հայտարարատուի անունից, օգտին կամ հաշվին ձեռք բերված, երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույք, կամ անշարժ գույք, որից փաստացի օգուտ է ստանում կամ այն տնօրինում է հայտարարատուն» բաժնում ՀՀ Արմավիրի մարզ, [REDACTED] [REDACTED] բնակարանը չի հայտարարագրվել որպես փաստացի տիրապետվող անշարժ գույք, այդուհանդերձ այդ անշարժ գույքը Հայտարարագրի «Ա.1. Հայտարարատու պաշտոնատար անձի տվյալները» բաժնում որպես իր բնակության և

հաշվառման հասցե հայտարարագրելով փաստացի բացահայտել է երրորդ անձանց՝ մորը և քրոջը, սեփականության իրավունքով պատկանող գույքի իր կողմից փաստացի տիրապետումը, որպիսի պայմաններում ապահովվել է պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահության հնարավորությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հայտարարագրի «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդները» բաժնում տվյալ տարվա սկզբում առկա դրամական միջոցի գումարը՝ 552,814 ՀՀ դրամ, իսկ տվյալ տարվա վերջում առկա դրամական միջոցի գումարը՝ 2,612,242 ՀՀ դրամ հայտարարագրելու վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի ընթացքում հաստատված փաստական տվյալների համաձայն նշված դրամական միջոցները հանդիսանում են «Ամերիա Բանկ» ՓԲ ընկերության թիվ [REDACTED]

[REDACTED] հայտ-պայմանագրով տրամադրված օվերդրաֆտի վերջնական հասանելի մնացորդները և չեն հանդիսանում հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցներ, ուստի հիմք ընդունելով Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումները «Բ.6.1 Բանկային հաշիվների մնացորդները» բաժնում հայտարարագրման ենթակա տվյալներ չեն:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ՝ Արմեն Սամվելի Հովհաննիսյանի կողմից կատարված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 21-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Արմեն Սամվելի Հովհաննիսյանին ազատել վարչական պատասխանատվությունից՝ հայտարարելով բանավոր դիտողություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Սամվելի Հովհաննիսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Արմեն Սամվելի Հովհաննիսյանին տրամադրել եռօրյա ժամկետ՝ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղում կատարելու համար:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՅԱՆ